

*Շրջակա միջավայրի նախարարության*

*«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

---

*Հոկտեմբերի առաջին տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## *ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Հոկտեմբերի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել է նորմայից 1-2աստիճանով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 7-ին, 8-ին, 10-ին. Տավուշում գրանցվել է +25…+28$^0$C (Դիլիջան՝ +29$^0$C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +21…+23$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +28…+30$^0$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +31…+33$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +26…+28$^0$C, Շիրակում՝ +20…+24$^0$C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +19...+23$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +23…+25$^0$C, Գեղարքունիքում՝ +19…+24$^0$C, Լոռիում՝ +25…+28$^0$C, Արմավիրում, Արարատում՝ +28...+30$^0$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +19…+23$^0$C, նախալեռներում՝ +23…+27$^0$C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 3-ին, 4-ին. Տավուշում գրանցվել է +4…+9$^0$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0…+1$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +6…+8$^0$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +7…+10$^0$C, նախալեռնային շրջաններում 0…+5$^0$C, Շիրակում՝ +1…+4$^0$C (Աշոցք -4$^0$C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 0…+3$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +3…+5$^0$C, Գեղարքունիքում՝ +1…+5$^0$C (Գավառ՝ -2$^0$C), Լոռիում՝ +1…+5$^0$C (Տաշիր՝ -1$^0$C), Արարատում, Արմավիրում՝ +4...+9$^0$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0…-1$^0$C, նախալեռներում՝ +5…+7$^0$C:*




*Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 10-27մմ (50-193%), Լոռիում՝ 8-15մմ (50-100%), Տավուշում՝ 12-26մմ (67-217%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 6-20մմ (40-118%), նախալեռներում՝ 1-3մմ (11-30%), Գեղարքունիքում՝ 2-10մմ (14-62%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 5-12մմ (29-60%), նախալեռնային շրջաններում՝ 1մմ (10%), Արմավիրում, Արարատում՝ 1-2մմ (11-20%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 16մմ (94%), նախալեռնային շրջաններում՝ 6մմ (60%), Սյունիքի հովտային շրջաններում՝ (Կապան 2մմ-13%), նախալեռնային շրջաններում՝ 6-11մմ (55-75%):*




*Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ 0…-4$^0$C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +2….+7$^0$C:*

***Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ***

**Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը**

Հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ սկսվել են աշնանացան ցորենի նախացանքի աշխատանքները, կատարվել են բանջարանոցային մշակաբույսերի, հնդավորների, խաղողի, ընկույզի, նախալեռնային շրջաններում կարտոֆիլի բերքահավաքը ավարտվել է, լեռնային շրջաններում շարունակվել է կարտոֆիլի, կաղամբի, ճակնդեղի և հնդավորների բերքահավաք:

Առանձին լեռնային շրջաններում աշնանացան ցորենը կտցել է, տեղ-տեղ ծլել:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները:

:

